

ԻՆԵԿՈ ՕՆԼԱՅՆ/ՄՈՐԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՔԱՐՏԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Փոխանցում քարտին ծառայությունը հնարավորություն է տալիս Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից, Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից, ինչպես նաև Ինեկո Օնլայն/Մորայլ համակարգում կցված¹ ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից փոխանցումներ կատարել ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված ցանկացած վճարային քարտի:

Փոխանցում քարտին ծառայության միջոցով կատարված գործարքների համար կիրառվում են հետևյալ սակագները՝

Գործառնություն	Սակագին
Փոխանցում Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից²	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկո Օնլայն/Մորայլ համակարգում կցված այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից³	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%

¹ Ինեկո Օնլայն/Մորայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման և սպասարկման պայմաններն ու սակագները կարգավորվում են «Ինեկո օնլայն/մորայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ» փաստաթղթով:

² Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից լրացուցիչ գանձվում է տվյալ վճարային քարտի պայմաններով և սակագներով սահմանված քարտից քարտ/քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցումների համար սահմանված սակագինը:

³ Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից թողարկող բանկի կողմից կարող են սահմանվել այլ վճարներ՝ համաձայն տվյալ քարտի սպասարկման պայմանների և սակագների:

ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	1%
--	----

Այլ պայմաններ

1. Տվյալ ծառայության միջոցով փոխանցումները իրականացվում են ՀՀ դրամով:
2. Փոխանցող և/կամ ստացող քարտի արժույթը ՀՀ դրամից տարբեր լինելու դեպքում փոխարկումը կատարվում է համաձայն համապատասխանաբար փոխանցող և/կամ ստացող քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
3. Տվյալ ծառայության միջոցով կատարված փոխանցումների դեպքում փոխանցվող գումարը քարտին հասանելի է դառնում հաշված ռոպեների ընթացքում:
4. Սույն փաստաթղթով սահմանված միջնորդավճարը գումարվում է գործարքի գումարին և գանձվում անմիջապես գործարքի ժամանակ: Մեկ գործարքի առավելագույն գումար է սահմանվում 500,000 ՀՀ դրամը: